սկսած. բայց գլխի մազերը սև են և կողքերից ուսերի վերայ իջած։ Գլխարկ չունի և վերևը գրուած է. «Առաքել ծառայ Աստ»։

Մանրանկարի երկիրը կանաչ է, շրջանակինը կարմիր, վերան գրչով արմատներկը յիշեցնող բուսական զարդով ծածկուած։

էլ շնորհալի կերպով ծալքաւորած։ Ոտներին սանդալ է, որի կապերը երևում են ոտների վերայ։ Զախով բռնել է բաց գիրքը, իսկ աջով եղեգնեայ գրիչը դրել վերան՝ գրելու համար։ Մորուքը մեծ է և ծայրը թեթև երկուսի ճեղքուած, որ արդէն սպիտակել է սկսել, նոյնը և բեխերը.

(պատկեր 4)

Զ.

Մնացած մեծ մանրանկարները աւետարանիչներն են իրենց սկզբնազարդերով. բայց այստեղ ևս Մարգարէն ցոյց է տալիս իւր ունակութիւնները, որքան և նիւթը աւանդական լինի. 18 բ — 19 ա. Մատթէոսն է իւր սկզբնազարդով. աւետարանիչը, 20,8 × 15,2 սն. մեծութեամբ շրջանակի հետ, նստած է առանց թիկունքի աթոռակի վերայ (պատկ. 5), որի երկու ոտներն ու նստելու տեղի մի կողքը երևում են, գրչով զարդարուած, ոճաւորած բուսական զարդերով. հագել է երկար, մինչև ոտները հասնող տունիկայ և ձախ թևի վերայից ձգել կապտաւուն տոգան, երկուսն

շրթունքները և սիրուն ձևակերպուած այտերը թեթև կարմրաւուն են, աչքերը մաքերի ամփոփման արտայայտութեամբ, սև բիբերով և ունքերով. գլխի մազերը համեմատաբար աւելի սև են, հաղիւ նկատելի թեթև ալեխառնութեամբ։ Աւետարանչի դէմքն ուղղուած է դէպի ձախ, երեքքառորդական պրոֆիլով։ Գլխի շուրջը մեծ և բոլորակ նիմբուս ունի, կարմիր ատատոը ոսկի փոշով ծածկուած։

Աւետարանչի առաջ դրուած է սեղան, որի կէս մասն է երևում. սեղանի շրջանակը բուսական գեղեցիկ օրնամենտով. սեղանի վերայ շարուած են գրչութեան գործիքները, կարկին, մկրատ, մագաղաթը ծեծելու մուշտայ և թանաքաման, զոյգ գրիչ-